

---

---

Л. М. ВАРДАНЯН. Степан Лисициан и истоки армянской этнографии. Ереван, изд. "Гитутюн" НАН РА, 2005, 424 с.

Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ. Ստեփան Լիսիցյանը և հայ ազգագրության ակունքները. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, 424 էջ:*

Հայ ազգագրության պատմության ուսումնասիրությունը ազգագրագետների առաջնահերթ խնդիրներից է, որի համակողմանի բացահայտման համար անհրաժեշտ է նախնական պրպտումներով վեր հանել այն երախտավորների կյանքն ու գործունեությունը, որոնք իրենց եռանդուն ջանքերով, քայլ առ քայլ նպաստել են հայ ազգագրության ձևավորմանն ու զարգացմանը: Ցավոք, ցայսօր լիարժեք ուսումնասիրված չեն Մ. Էմինի, Գ. Խալաթյանցի, Գ. Սրվանձտյանի, Եր. Լալայանի, և այլոց ազգագրական գործունեությունը:

Արխիվային վավերագրերի վերհանմամբ Լ. Վարդանյանն առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրել է անվանի հայագետ, պատմաբան, ազգագրագետ, աշխարհագրագետ, թարգմանիչ, մանկական գրող, մանկավարժ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ստ. Լիսիցյանի կյանքն ու ստեղծագործական ուղին:

Ստ. Լիսիցյանի ազգագրագետ թոռնուհու՝ Լ. Վարդանյանի ուշագրավ այս մենագրությունը կազմված է առաջաբանից, վեց գլխից, վերջաբանից, հայերեն և անգլերեն ամփոփումներից, հավելվածում տեղ գտած Ստ. Լիսիցյանի բազմահարուստ արխիվից ընտրված ձեռագիր նմուշներից և մատենագրական ցանկերից: Գրքում զետեղված են նաև Ստ. Լիսիցյանի տոհմիկ ծագումն ու ապրած ժամանակաշրջանը վերակենդանացնող լուսանկարներ:

Մենագրության I գլխում ներկայացված է Ստ. Լիսիցյանի կյանքի և գործունեության ամփոփ նկարագիրը, II գլխում խոսվում է Կովկասի պատմահնագիտական բաժնում նրա ծավալած գործունեության մասին, III գլուխը վերաբերում է Հայաստանի պատմաազգագրական շրջաններում գավառագիտական կազմակերպություններ-

րի (թանգարաններ, ընկերություններ, խմբակներ, բջիջներ) լայն ցանց ստեղծելու ուղղությամբ կատարած աշխատանքներին, IV գլխում վեր է հանված Հայաստանում ազգագրական թանգարանագիտության ստեղծման և զարգացման բնագավառում Ստ. Լիսիցյանի ներդրումը, V գլխում լուսաբանված է ազգագրություն առարկան բուհական ծրագրերում ընդգրկելու և որակյալ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ նրա դերը, VI գլխում Ստ. Լիսիցյանը ներկայացված է որպես հայ ազգագրության դպրոցի հիմնադիր:

Ստեփան Դանիելի Լիսիցյանը ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 23-ին Թիֆլիսում, զինվորական բժիշկ, գեներալ Դանիել Քրիստափորի Լիսիցյանի ընտանիքում: 1884 թ. Թիֆլիսում առաջին արական գիմնազիան ավարտելուց հետո նա բարձրագույն կրթություն է ստացել Եվրոպայում: 1889 թ., ավարտելով Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան և նույն թվականին մանկավարժական աշխատանքի է անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ դասավանդելով պատմություն, աշխարհագրություն, ռուս գրականության պատմություն (տիրապետում էր 12 լեզվի): 1891 թ. տեղափոխվում է Թիֆլիս, տեղում ծավալում գիտամանկավարժական, հրատարակչական գործունեություն: 1892–1893 թթ. նա աշխատակցում է «Տարագ» շաբաթաթերթին, միաժամանակ որպես մանկական գրող և թարգմանիչ մասնակցում «Աղբյուր» պատկերազարդ հանդեսի հրատարակմանը: 1892–1903 թթ. նա Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերության» խմբագրական հանձնաժողովի քարտուղարն էր: Կառավարության կողմից այն փակվելուց հե-

տո նա կազմակերպել է «Ստ. Լիսիցյան և ընկերություն» (1903–1905 թթ.) հրատարակչական ֆիրման, որը զբաղվում էր հայ դասական և եվրոպական գրականությունը հայերեն հրատարակելու աշխատանքներով:

1894–1915 թթ. Ստ. Լիսիցյանը դասավանդում է Ներսիսյան դպրոցում, իսկ 1898 թ. իր տիկնոջ՝ Կատարինե Լիսիցյանի (Ախշյանի) հետ բացում է հայկական երկսեռ տարրական դպրոց, որն ուներ գիմնազիայի կարգավիճակ: Լիսիցյանի մանկավարժական-լուսավորական կարևոր ներդրումներից է «Հասկեր» մանկական հանդեսի հրատարակությունը (1905–1917 թթ.), որի էջերում նա հանդես է գալիս որպես մանկական գրող ու թարգմանիչ, իսկ 1907–1922 թթ. Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի համագործակցությամբ I–V դասարանների համար կազմում է «Լուսաբեր» հայոց լեզվի դասագիրքը:

XIX դ. վերջերից Ստ. Լիսիցյանը հանդես է գալիս նաև գրականագիտական աշխատանքներով՝ նվիրված Ա. Պուշկինի, Ն. Գոգոլի, Հ. Սենկևիչի ստեղծագործություններին, միաժամանակ «Տարազի» էջերում հրապարակում գրաքննադատական հոդվածներ ու գրախոսություններ, ինչպես նաև մասնակցում է Խ. Ֆ. Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատության անգլերենից ռուսերեն թարգմանությանը: Նա թարգմանում է նաև Հ. Սենկևիչի «Յո՞ր երթաս» վեպը (1898): Ստ. Լիսիցյանը Թումանյանի «Վերնատուն» գրական միավորման եռանդուն մասնակիցներից էր: Գիտամանկավարժական ասպարեզում ձեռքբերումների համար 1941 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Անվանի գիտնականը վախճանվել է 1947 թ. Երևանում:

Ստ. Լիսիցյանը հայ մտավորականության այն նշանավոր ներկայացուցիչներից է, որի բազմակողմանի գործունեությունը լայն ճանաչում է գտել դեռևս XIX դ.: Հանգամանքների բերումով, սակայն, նա ազգագրությամբ սկսել է զբաղվել 1920-ական թվականներից՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առաջին իսկ

տարիներից: Հնի և նորի պայքարի կիզակետում հայտնված հարազատ ժողովրդի ազգային դիմագիծը պահպանելու, նրա իսկ կողմից ստեղծված հոգևոր ու նյութական մշակութային արժեքները փրկելու մտահոգությամբ Ստ. Լիսիցյանը ժամանակի թելադրանքով ձեռնամուխ է լինում մի նոր առաքելության: «Խորհրդային կարգերում հաստատված տնտեսական, մշակութային և սոցիալական պայմանների մեջգրում է Ստ. Լիսիցյանը,– մանավանդ կուտնտեսային շինարարության հետևանքով հանրապետության բոլոր ազգությունների մեջ հին կենցաղը ենթարկվում է արմատական ձևափոխման... անցյալի հիշողությունները արագ մթազնվում են, իսկ տնայնագործական իրերը՝ գործածությունից հանվել և պահպանվել են ողորմելի վիճակի մեջ, այս ու այնտեղ, պատահաբար» (էջ 418–419): Եվ «Քանի որ [արևմտահայոց] նախկին հայրենի գավառները դատարկված են և այնտեղ վերադառնալու ոչ մի հեռանկար չկա, միակ ճանապարհն է գիտության համար մոռացությունից փրկել ազգագրական նյութերը և կենցաղային իրերը, գրանցել նաև ֆոլկլորն ու բարբառը, մինչև որ տեղափոխվածները չեն միաձուլվել վերջնականապես նոր ազգագրական միջավայրի հետ» (նույն տեղում): Ազգագրական նյութերի փրկությանը նախանձախնդիր Ստ. Լիսիցյանը ձեռնամուխ է լինում ազգագրական գիտաբանների կազմակերպմամբ՝ հետազոտական աշխատանքները թողնելով ապագային:

1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով Թիֆլիսից տեղափոխվելով Երևան՝ սկսվում է Ստ. Լիսիցյանի գործունեության մի նոր բեղմնավոր ժամանակաշրջան: Որպես ՀԽՍՀ լուսժողովմատին կից Մեթոդական խորհրդի անդամ և Կենտրոնական գավառագիտական բյուրոյի գիտնական քարտուղար՝ Ստ. Լիսիցյանը զգալի դեր է կատարում հանրապետությունում գավառագիտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Նրա գործուն մասնակցությամբ բոլոր շրջաններում ստեղծվում է գավառագիտական կազմակերպությունների և հաստատությունների (թանգարաններ, ընկերու-

յուններ, խմբակներ, բջիջներ) լայն ցանց, որի նպատակային աշխատանքի համար նա կազմում և հրատարակում է մի շարք ուղեցույցներ: 1926 թ. ազգագրագետի կազմած «Գավառագիտություն» խորագրով ձեռագիր հարցարանը կարևոր ներդրում է գյուղի, քաղաքի տնտեսական, հասարակական և ընտանեկան կյանքին վերաբերող նյութերի հավաքման գործում (մինչ այդ կար Գ. Խալաթյանցի կազմած ծրագիրը): Դրանում ընդգրկված են էթնոսոցիալական հետազոտությունների մի շարք հիմնախնդիրներ: Ազգագրության բնագավառում Ստ. Լիսիցյանի աշխատանքները ծավալվել են երեք հիմնական ուղղություններով՝ հավաքչական, գիտահետազոտական և գիտակազմակերպական: 1925–1928 թթ. Ստ. Լիսիցյանը կազմակերպել է ազգագրական մի շարք գիտարշավներ դեպի Լեռնային Ղարաբաղ, Մեղրի, Նախիջևան: Այդ տարիներին Շատախի, Մոկսի, Սասունի, Ալաշկերտի և Արևմտյան Հայաստանի պատմաազգագրական այլ մարզերից գաղթած հայերից հավաքել է պատմամշակութային ուշագրավ նյութեր: 1928 թ. Ստ. Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի Պետական պատմական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և եռանդուն գործունեություն ծավալում թանգարանային ցուցանմուշներ ժողովելու և հավաքածուները համալրելու ուղղությամբ:

Քաջ գիտակցելով հոգևոր մշակութային տարբեր երևույթների նկատմամբ ձևավորվող վերաբերմունքը 1920–1930 թթ. սոցիալիստական արմատական վերափոխումների փուլում՝ Ստ. Լիսիցյանը կազմակերպում է գիտարշավներ Ջանգեզուրի, Լոռու, Սևանի ավազանի, Աշտարակի, Ջավախքի և այլ շրջաններ ու այդ վայրերում չգործող եկեղեցիներից ընտրում և Մայր թանգարան է տեղափոխում պատմամշակութային արժեք ներկայացնող բազմաթիվ նմուշներ: Նա առաջինն է կարևորել հայ գաղթականների և Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կյանքն ու կենցաղը հետազոտելու անհրաժեշտությունը:

Հայ ազգագրության մեջ կարևոր ներդրում է Ստ. Լիսիցյանի կազմած «Ազգագրական հարցարանը» (1946): Այն մինչ օրս,

իբրև մեթոդական ձեռնարկ, աջակցում է ազգագրագետներին՝ հավաքչական աշխատանքներում: Նրա հավաքչական աշխատանքների հանրագումարը մենագրական այն հետազոտություններն են, որոնք լույս են տեսել նրա մահից հետո. «Ալեմարկներ նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» (1955 թ., ռուսերեն), «Ջանգեզուրի հայերը» (1969 թ.), «Լեռնային Ղարաբաղի հայերը. ազգագրական ակնարկ» (1981 թ., հայերեն, 1992 թ.՝ ռուսերեն):

Ստ. Լիսիցյանը մեծ ջանքեր է գործադրել բուհերում ազգագրություն առարկան ուսումնական ծրագրերում ընդգրկելու ուղղությամբ: Նրա երազանքն էր հանրապետությունում ստեղծել ազգագրական գիտահետազոտական կենտրոն: Այս առումով ուշագրավ են ներկայացվող գրքում տեղ գտած 1944 թ. ՀԿ(Բ)Պ Կենտկոմի քարտուղար Ս. Կ. Կարապետյանին հղած Ստ. Լիսիցյանի նամակի այն տողերը, որոնցում, մտահոգված ազգագրության ճակատագրով, նա առաջարկում է Ակադեմիայում բացել ազգագրության հատուկ բաժին՝ նշելով ազգագրության դերը հայագիտական որոշ բնագավառների համալիր հետազոտման գործում: Ըստ նրա՝ «առանց ազգագրության հնագիտական նյութերը կմնան լուր ու չեն խոսի, ֆոլկլորը կլինի ավելի քան թերբովանդակ ու մեծ մասամբ - դատարկ հնչյուն» (էջ 418): Ստ. Լիսիցյանի երազանքն իրականացավ 1959 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրմամբ, որի կազմում ընդգրկվեց նաև բանահյուսության բաժինը: Ի դեպ, ազգագրության բաժնի հիմնական կորիզը կազմել են նրա սաները (Վ. Բդոյան, Կ. Մելիք-Փաշայան, Դ. Վարդումյան և ուրիշներ): Շարունակելով իր նախորդների, հատկապես Եր. Լալայանի գործը՝ Ստ. Լիսիցյանը հայ ազգագրական գիտության մակարդակը բարձրացրեց մի նոր աստիճանի:

Լայն ու բազմակողմանի է Ստ. Լիսիցյանի հետաքրքրությունների շրջանակը: Նշանակալից է նրա դերը Հայկական ԽՍՀ Աշխարհագրական ընկերության կազմակերպման գործում: Աշխարհագրության

ասպարեզում նրա բազմամյա գործունեության արգասիքը հանդիսացավ «Հայկական ԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն. դեմոգրաֆիայով» աշխատանքը (1940 թ.): Գիտնականը փաստական հարուստ նյութ է հավաքել հայոց պատմության, հատկապես աքեմենյան, սելևկյան, հռոմեական ժամանակաշրջանների վերաբերյալ, դրանց շուրջ գրել մի շարք հոդվածներ: Նա առաջինն է վերծանել Գառնիի հունարեն արձանագրությունը (1945 թ.) և մեկնաբանել Զանգեզուրի Զորաց-քարեր (Ղոշուն-դաշ) հուշարձանը (1938 թ.):

Անփոփելով՝ նշենք, որ գրախոսվող աշխատությունը կարևոր ներդրում է հայագիտության, մասնավորապես՝ հայագագրության պատմության մեջ: Լ. Վարդանյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Ստ. Լիսիցյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող արժեքավոր նյութեր, որոնք իրենց սկզբնաղբյուրային նշանակությամբ օգտակար կլինեն հայագիտության տարբեր բնագավառների հետազոտական աշխատանքներում:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ